ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ-ԼՄՀ-ՄԱԱՇՁԲ-19/01

 հ. Ստեփանավան «06» մարտի 2019թ.

«Հարինգ» ՍՊԸ այսուհետև «Մատակարար» , ի դեմս Կ. Ծատուրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և ***<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկն,*** այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ***համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի,*** որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է կատարել աղբահանության կտրոնների և պայմանագրերի, բացիկների, պատվոգրերի և շնորհակալագրերի տպագրության աշխատանքներ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գնորդը իրավունք ունի կատարված աշխատանքների որակը ստուգել տեղում, չհամապատասխանելու դեպքում անմիջապես վերադարձնել կամ փոխել:

2.2.Մատակարարը պարտավոր է կատարված աշխատանքների որակը ստուգել տեղում, չհամապատասխանելու դեպքում՝ չմատուցել:

2.3. Մատակարարը մատուցած աշխատանքը ետ չի ընդունում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը, գինը, գնի վճարման ժամկետը և կարգը

3.1. Պայմանագրով նախատեսվում է «Գնորդին» մատակարարել <u>299800 (երկու հարյուր իննսունինը հազար ութ հարյուր)</u> դրամ արժողությամբ աշխատանք:

3.2 Պայմանագրով նախատեսված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, աշխատանքը ստանալուց առաջ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի 3.2 կետում նշված վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարին վճարում է տուգանք՝ կատարված աշխատանքի գումարի 0.2% -ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

5. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի վավերացման պահից և ուժի մեջ է մինչև «25» դեկտեմբերի 2019թ.:

6.2. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրքանաչյուր կողմի մոտ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	Մատակարար
<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ	«Հարինգ» ՍՊԸ
Հասցե հ. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
ՀՎՀՀ 06954104	ՀՎՀՀ 06937776
Հ/հ բանկ 900256101016	հ/հ 2050222016071002 «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Համայնքի ղեկավար _____ Մ. Ղարաքեշիշյան	_____ Կ. Ծատուրյան